

Հրամանատարաշտաբային ուսումնավարժանք՝ բնակչության պաշտպանությունը ուժեղ երկրաշարժի դեպքում

Սուպտոմբերի 25-ին ժամը 07:30-19:00 Արագածոտնի մարզպետարանում Արագածոտնի մարզային փրկարարական վարչության կողմից անցկացվեց հրամանատարաշտաբային ուսումնավարժանք «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով, որի նպատակն էր կատարելագործել «Արագածոտնի մարզի պետական կառավարման տարածքային մարմնի, մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և մարզային փրկարարական վարչության հմտություններն ու ունակությունները ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում:

Ուսումնավարժանքը անցկացնում էին Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանը և մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Ա. Մանուկյանը: Մասնակցում էին Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական, տարահանման հանձնաժողովների, Արագածոտնի մարզային փրկարարական վարչության, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևույթաբանական և մոնիթորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ծառայության, Աշտարակ համայնքի ղեկավար կազմի ներկայացուցիչները:

Ժամը 07:30-ից ՄՓՎ ՃԿԿ-ի կրտսեր հրահանգիչը ՀՀ ԱԽՆ սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայության հերթապահից ստանում է հաղորդագրություն, որ Արագածոտնի մարզի տարածքում, Աշտարակ քաղաքից 10 կմ հարավ-արևելք, 11 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,2 մագնիտուդով երկրաշարժ: Ազդարարման փուլին հաջորդում է որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը, որն իրականացնելու համար վարժանքի մասնակիցները ներկայացրեցին իրենց տրամադրության տակ եղած ուժերը: Քննարկվեց նաև մասնակիցների զեկույցները և ընդհանուր գնահատական տրվեց հնարավոր երկրաշարժի դեպքում աշխատանքների վերաբերյալ:

Ուսումնավարժանքը հնարավորություն տվեց պարզել արձագանքող ուժերի ղեկավարներին ունակությունները աղետի գոտում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործում, ստուգել «Արագածոտնի մարզում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման պլանի» իրատեսությունը և կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների և ուժերի միջև:

<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

<<___ >> _____ 2014թ.

Պ Լ Ա Ն

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՅՄԱՆ

Թեման՝ <<Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը ուժեղ երկրաշարժի դեպքում>>

Ուսումնավարժության նպատակները՝

- ա) կատարելագործել ՀՀ Արագածոտնի մարզի պետական կառավարման տարածքային մարմնի, մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և մարզային փրկարարական վարչության հմտություններն ու ունակությունները ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և իրականացման գործում.
- բ) ստուգել և կատարելագործել արձագանքող ուժերի ղեկավարների ունակությունները աղետի գոտում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործում.
- գ) ստուգել <<Արագածոտնի մարզում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման պլանի>> իրատեսությունը.
- դ) կատարելագործել փոխհամագործակցությունը կառավարման մարմինների և ուժերի միջև:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝

Արագածոտնի մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողով, մարզի տարահանման հանձնաժողով, Արագածոտնի մարզային փրկարարական վարչություն, ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկներ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության <<Հիդրոօդերևույթաբանական և մոնիթորինգի պետական ծառայություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության մարզային ծառայություն, Աշտարակ համայնքի ղեկավար կազմ, մարզի զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Անցկացման ժամանակը՝

2014թ. սեպտեմբերի 25-ին ժամը 07:30-ից 19:00

Անցկացման վայրը՝

Արագածոտնի մարզպետարան, գործնական տեղամաս՝ Ք.Աշտարակ (Նախկին առևտրի տուն և նրան կից կիսաքանդ շինություն)

Ելակետային իրավիճակը

2014թ. սեպտեմբերի 25-ին ժամը 07:30-ին Արագածոտնի մարզի տարածքում, Աշտարակ քաղաքից 10 կմ հարավ-արևելք, 11 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,2 մագնիտուդով երկարաշարժ: Աշտարակ քաղաքում ինտենսիվությունը ըստ MSK-64 սանդղակի կազմել է 7-8 բալ: Նախնական տվյալներով մարզում կան շենք շինությունների ավերածություններ, առավել ծանր ինժեներական, բժշկական և հրդեհային իրավիճակ է ստեղծվել Աշտարակ քաղաքում:

Ժամը		Ուսումնական հարցերը	Իրավիճակը (միջանկյալների բովանդակությունը)	Ուսուցանվողների գործողությունները	Ուսումնավարժության ղեկավարի գործողությունները
Օպերատիվ	Աստղաբաշխական				
1	2	3	4	5	6
<p>I ՓՈՒԼ - «Արզի բնակչության պաշտպանության համակարգի պատրաստականության բերման միջոցառումների իրականացում >> Տևողությունը - աստղաբաշխական ժամանակով՝ 25.09.2014թ. ժամը 07:30-ից 13:00-ն - օպերատիվ ժամանակով՝ 25.09.2014թ. ժամը 07:30-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը</p>					
07:30-09:30	07:30-09:30	1.Մասնակիցների ազդարարում, հավաք և խնդրադրում:	ՄՓՎ ՃԿԿ-ի կրտսեր հրահանգիչը ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության հյուսիսային ծառայության հերթապահից ստանում է հաղորդագրություն, որ Արագածոտնի մարզի տարածքում, Աշտարակ քաղաքից 10 կմ հարավ-արևելք, 11 կմ խորության վրա տեղի է ունեցել 5,2 մագնիտուդով երկարաշարժ: Աշտարակ քաղաքում	ՄՓՎ ՃԿԿ-ի կրտսեր հրահանգիչը ստանալով ահազանգ ամնիջապես զեկուցում է մարզպետին, ՄՓՎ պետին և նրանց կարգադրությամբ իրականացնում է մասնակիցների ազդարարում և հավաք:	Ուսումնավարժության ղեկավարը մարզային փրկարարական վարչության ՃԿԿ-ի կրտսեր հրահանգիչին տալիս է կարգադրություն ուսումնավարժության մասնակիցների ազդարարում և հավաք իրականացնելու վերաբերյալ:
				Ուսումնավարժության մասնակիցները ստանալով հավաքի ազդանշան ներկայանում են մարզպետարան մասնակցելու խորհրդակցությանը (զուգահեռ կազմակերպելով ենթակա	ՀՇՈՒ-ի ղեկավարման շտաբի միջոցով հետևում է ազդարարման և

			ինտենսիվությունը ըստ MSK-64 սանդղակի կազմել է 7-8 բալ: Նախնական տվյալներում մարզում կան շենք շինությունների ավերածություններ, առավել ծանր հնժեներական, բժշկական և հրդեհային իրավիճակ է ստեղծվել Աշտարակ քաղաքում:	անձնակազմի ազդարարում և հավաք): ՄՓՎ պետը զեկուցում է մարզպետին խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: ՄՓՎ պետը ներկայացնում է ստեղծված իրավիճակը: Գործողության մեջ է դրվում <<Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան>>-ը: Ծանոթանում են ընդհանուր իրավիճակին:	հավաքի ընթացքին: Ընդունում է ՄՓՎ պետի զեկույցը խորհրդակցությանը պատրաստ լինելու վերաբերյալ: Հրավիրում է ԱԻ հանձնաժողովի արտահերթ նիստ: Տալիս է բնակչության պաշտպանության համակարգը պատրաստության բերման հրաման:
	09:00	Միջանկյալ թիվ-1	Իրավիճակը ըստ միջանկյալի	Պատրաստում են զեկույցներ ըստ միջանկյալի	
09:30-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը	09:30-10:30	2.Հետախուզության կազմակերպում և իրականացում, իրավիճակի գնահատում, առաջարկությունների ներկայացում:	Մարզում առկա են փլուզված շենք շինություններ, բնակչության շրջանում կան զոհեր, վիրավորներ և անհայտ կորածներ: Ստեղծվել է բարդ սանիտարական իրավիճակ, կան խցանված ճանապարհներ, առկա են հրդեհների օջախներ, մասնակի շարքից դուրս են եկել կոմունալ-էներգետիկ, կապի և հեռահաղորդակցության ցանցերը: Բնակչությունը փորձում է ձեռքի տակ	Ըստ ոլորտների իրականացնում են հետախուզություն: Զեկուցում են հետախուզության արդյունքների մասին, որի հիման վրա ՄՓՎ պետը ներկայացնում է առաջարկություն որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու վերաբերյալ:	Տալիս է կարգադրություն ստեղծված իրավիճակը ճշգրտելու նպատակով հետախուզություն իրականացնելու վերաբերյալ: Կարգադրում է ղեկավարման շտաբի պետին մշտապես համագործակցել ԶԼՄ-ների հետ:

			եղած գործիքներով փլատակների տակից դուրս բերել հարազատներին:		
	10:35 11:00 12:00	Միջանկյալ թիվ-2 Միջանկյալ թիվ-3 Միջանկյալ թիվ-4	Իրավիճակը ըստ միջանկյալների	Պատրաստում են զեկույցներ ըստ միջանկյալների	
	12:30-13:00	I փուլում կատարած աշխատանքների արդյունքների ամփոփում:		Զեկուցում են I-ին փուլում իրենց կողմից կատարված աշխատանքների մասին:	Ունկնդրում և քննարկում է մասնակիցների զեկույցները կատարած աշխատանքների վերաբերյալ:

II ՓՈՒԼ <<Որոնողափրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների և բնակչության տարահանման միջոցառումների կազմակերպում>>

Տևողությունը - աստղաբաշխական ժամանակով՝ 25.09.2014թ. ժամը 13:00-ից 17:30

- օպերատիվ ժամանակով՝ 25.09.2014թ. ժամը 13:00-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը

13:00-ից մինչև փրկարարական աշխատանքների ավարտը	13:00-14:30	1. Որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում:	Երկրաշարժի գոտու կորուստների թիվը կազմում է մոտ 750 մարդ: Առավել ծանր իրավիճակ է ստեղծվել Աշտարակ քաղաքում, որտեղ կան հրդեհներ և կոմունալ էներգետիկ ցանցի վթարներ: Մարզում ձևավորվել են աշխատանքային տեղամասեր, որտեղ իրականացվում են որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: Աշխատանքներին ներգրավված են Արագածոտնի ՄՓՎ ուժերը, մարզի առաջին	ՄՓՎ պետր նախապատրաստում և մարզպետին է ներկայացնում ՓԱՎԱ կազմակերպման ու իրականացման մասին հրամանի նախագիծը: «Ա» պետական կառավարման տարածքային մարմինները ճշտում են իրենց աշխատանքի ծավալները և անհրաժեշտ ուժերն ու միջոցները: Երկրաշարժի գոտում ծավալվում է փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ղեկավարի շարժական կառավարման կետը: Աղետի գոտին բաժանվում է փրկարարական աշխատանքային տեղամասերի և այդ տեղամասերում նշանակվում են ղեկավարներ, որոնք ծավալում են իրենց շարժական կառավարման կետերը: Փրկարարական ուժերի համար երկրաշարժի գոտուց դուրս նշանակվում են հավաքման վայրեր և ապահովվում են արագ ու հարմար ելքեր դեպի	Տալիս է կարգադրություն՝ 1.մարզի ուժերի և խմբավորումների երթը տուժած տարածքներ կազմակերպելու, 2.որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու, 3.բնակչությանը վարվելակերպի կանոնների մասին իրազեկումը կազմակերպելու վերաբերյալ:
--	-------------	---	--	--	---

			<p>կանչի ուժերը, Աշտարակ քաղաքի կազմավորումները և բնակիչներից ձևավորված աշխատանքային խմբերը:</p>	<p>աշխատանքային տեղամասեր: ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության ուժերով հրականագվում է երկրաշարժի գոտու շրջափակում և հիմնական երթուղիներում կազմակերպվում է պարեկային ծառայություն: Երկրաշարժի հետևանքների վերազման մարզային և համայնքային արտակարգ իրավիճակների հանձնաժողովները ղեկավարում են փրկարարական աշխատանքների հրականագման գործընթացը համապատասխան տարածքներում (փրկարարական աշխատանքների տեղամասերում): Փրկարարական աշխատանքների ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի փոխհամագործակցությունը՝</p> <ul style="list-style-type: none"> - որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի, - որոշում են հնժեներական տեխնիկայի օգտագործման կարգը աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում, - համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ենթակա ուժերի և հարևան կազմավորումների գործողությունները, - որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև: <p>Փրկարարական ուժերի երկրաշարժի գոտու փրկարարական աշխատանքների</p>	
--	--	--	--	--	--

				<p>տեղամասեր ժամանումից հետո աշխատանքների տեղամասերի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում փյուզված և այրվող շենքերից ու շինություններից մարդկանց փրկելու, առաջին օգնություն գուցաբերելու և դաշտային ստագիոնար բուժ. հիմնարկներ տեղափոխելու վերաբերյալ:</p> <p>ՄՓՎ պետր կազմակերպում է ՓԱՎԱ հրականագնող ուժերի խմբավորում և վերահսկում կատարման ընթացքը: Տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում օգտագործում են տեղի բնակչության կողմից ստագված տեղեկատվությունը և նրանց օգնությամբ տուժածներին դուրս բերում փլատակների տակից:</p> <p>Աղետի գոտում ստեղծված լրատվական կենտրոնը լրագրողների համար կազմակերպում է մամուլի ասուլիսներ, իրականացվող փրկարարական աշխատանքների մասին և տրամադրում լրատվական համառոտ տեղեկանքներ:</p> <p>ԶԼՄ-ների և ոստիկանության շրջիկ խմբերի միջոցով կազմակերպվում են բնակչության վարվելակերպի կանոնների մասին իրազեկումը:</p>	
	<p>13:30 13:50 14:20 14:45 15:00</p>	<p>Միջանկյալ թիվ-5 Միջանկյալ թիվ-6 Միջանկյալ թիվ-7 Միջանկյալ թիվ-8 Միջանկյալ թիվ-9</p>	<p>Իրավիճակը ըստ միջանկյալների</p>	<p>Պատրաստում են զեկույցներ ըստ միջանկյալների</p>	
	<p>15:30-16:30</p>	<p>2. Անօթևան մնացած բնակչության տարահանման կազմակերպում:</p>	<p>Ծավալված տարահանման հավաքակայաններում ճշտվում են տարահանման հաշվարկները և երթուղիները:</p>	<p>Տարահանման հանձնաժողովը կատարում է աշխատանքներ տուժած բնակչության տարահանման և կենսագործունեության ապահովման</p>	<p>Տալիս է կարգադրություն տարահանման միջոցառումները սկսելու մասին:</p>

			Կենսապահովման նպատակով ստեղծվել են ջրի, սննդի, առաջին անհրաժեշտության իրերի բաշխման կետեր:	ուղղությամբ:	
	15:50 16:10	Միջանկյալ թիվ-10 Միջանկյալ թիվ-11	Իրավիճակը ըստ միջանկյալների	Պատրաստում են զեկույցներ ըստ միջանկյալների	
	16:15-17:00	3. Մարդասիրական օգնության և փրկարարական ուժերի ղնդունում և բաշխում:	Մարզի ուժերն ու միջոցները բավարար չեն ՈՓԱՎԱ իրականացման, տուժած բնակչության կենսապահովման և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների արդյունավետ իրականացման համար:	ԱԻ հանձնաժողովը համայնքներից ներկայացված հայտերի հիման վրա կատարում է համապատասխան հաշվարկներ, այնուհետև ներկայացնում ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողով: Մարզի ԱԻ հանձնաժողովին կից նախօրոք ստեղծված մարդասիրական օգնության բաշխման խմբերը իրականացնում են մարդասիրական օգնության ղնդունման և բաշխման գործընթացը: Մարզի այլ համայնքներից և հարևան մարզերից ժամանած փրկարար ուժերի, ինչպես նաև հասարակական փրկարարական ջոկատների ներգրավումն իրականացնում են համաձայն նախօրոք մշակված փոխգործողությունների պլանների: Օգնության ժամանած միջազգային ուժերի ներգրավումն իրականացվում է համաձայն հայտի, որը Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովը ներկայացնում է ժամանած միջազգային ուժերի կողմից ստեղծված շտաբ: միջազգային ուժերի անմիջական ղեկավարումն աշխատանքային տեղամասերում իրականացնում են աշխատանքային տեղամասերի ղեկավարները:	Կարգադրում է սահմանված կարգով կազմակերպել մարդասիրական օգնության և փրկարարական ուժերի ղնդունման և բաշխման գործընթացները:

	17:00-17:30	II փուլում կատարած աշխատանքների արդյունքների ամփոփում:		Մասնակիցները զեկուցում են 2-րդ փուլում իրենց կողմից կատարված աշխատանքների մասին:	Ունկնդրում և քննարկում է մասնակիցների զեկույցները 2-րդ փուլում կատարած աշխատանքների վերաբերյալ և տալիս գնահատական:
<p align="center">III ՓՈՒԼ <<Գործնական միջոցառումներ՝ համաձայն գործնական միջոցառումների պլանի>> Տևողությունը - աստղաբաշխական ժամանակ-25.09.2014թ. ժամը 17:30-ից 18:30 - օպերատիվ ժամանակ՝ մինչև հետևանքների վերացում</p> <p align="center">25.09.2013թ. ժամը 17:30-ից 18:30 իրականացվում է 3-րդ փուլով նախատեսված գործնական միջոցառումները:</p>					
	18:30-19:00	Ուսումնավարժության արդյունքների ամփոփում		Մասնակցում են ամփոփմանը:	Անցկացնում է ուսումնավարժության արդյունքների հակիրճ ամփոփում, մատնանշում ուժեղ և թույլ կողմերը, նշանակում թերությունների վերացման ժամկետները և տալիս գնահատական:
	19:00	Ուսումնավարժության ավարտ			Հայտարարում է ուսումնավարժության ավարտ:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ,
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄՓՎ ՊԵՏ, Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ՝ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ